

կտրեցին զլուխը, տաշտն ու արիւնն ընկան «ի վերայ բաժակալ սկտեղն» (Փաւս. 283):

Հակառակ միւս սպասաւորաց՝ որ «ի թիկանց կողմանէ» կը ծառայէին (աստ, 187), մատուակները կը կանգնին «առաջի» կոչնականաց (Կաղ. 126): Այս պարագայն՝ զոր մեր դրացի Աղուանից հայաբարբառ պատմիչը կ'աւանդէ, համոզուած եմ թէ մեզ եւս սեպհական էր: Եւ կը ստիպէ զմեզ գուշակել՝ որ այս տեղ կարեւոր փոփոխութիւն մը կը կատարուէր: Սեղաններն ու բազմականք կը տեղափոխուէին պատերուն մօտ, եւ կոչնականք կը նստէին սեղանոց ետեւ միայն, ազատ թողլով առաջակողմն եւ ատեանը գուսանութեանց ու պարերու՝ որ այժմ պիտի կատարուին, եւ մատուակաց ըստ սպասաւորութեան՝ որոնք սեղանոց այդ ղիրքի մէջ բնականապէս «առաջի» պիտի կանգնէին: Արդէն Հելլէնք սեղաններն անգամ կը փոխէին (Գար. Ա, 1275), եւ իրենց ու հոովմէական զինարրութեանց հին ձեւերու մէջ սեղանի երեսն ազատ է միշտ՝ ծառայից ու երաժշտաց համար (անդ, 1274, '76, '80):

24. - Նորագ ոչրախոչրեան: — Այսպէս եւ կամ ուրիշ հոմանշերով կը կո-